ՕԾՎԵՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ

Նոյեմբերի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ օծվեց Արարատյան Հայրապետական թեմի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու նորակառույց զանգակատունը, սրբագործվեցին եկեղեցու բակում տեղադրված երեք խաչքարերը:

Ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ԱՄՆ արևմտյան և արևելյան թեմերի առաջնորդներ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի ու Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի և Ավստրալիայի թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանի օծվեցին զանգակատան մուտքը, արևելյան ու արևմտյան կողմերի աջ և ահյակ սյուները:

Ասպծո նախախնամությամբ Երևանի Ս. Սարգիս եկեղեցին մարտնչող անաստվածության տարիներին չավերվեց այլ եկեղեցիների նման, իսկ ժամանակի իշխանավորների ազնիվ մղումով նաև նորոգվեց ու բարեզարդվեց՝ հովանավորությամբ լոնդոնաբնակ Սարգիս և Աստղիկ Քյուրքչյանների ու նրանց որդիների:

«Բարերարներն այդ պահից ի վեր հոգեպես կապվեցին այս եկեղեցուն և նախանձախնդրորեն հետամուտ եղան, որպեսզի եկեղեցին միշտ մնա պայծառ, միշտ մնա շեն»,- օրհնությամբ ու գնահատանքով ասաց Վեհափառ Հայրապետը, որ 17 տարիներ շարունակ լինելով Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, մշտապես գործակցել է եկեղեցասեր բարերարների հետ:

Այժմ էլ նորակառույց զանգակատունը վեր է խոյացել շնորհիվ Քյուրքչյան որդիների՝ Ջորջ և Հովհաննես Քյուրքչյանների: Նրանց բարերարությամբ շարունակվում է նաև առաջնորդանիստ եկեղեցու տարածքի բարեկարգումը: Ինչպես նշեց Նորին Սրբությունը, եկեղեցանվեր բարերարի հաջորդ հանձնառությունը Տաթևի եկեղեցու վերաշինությունն է լինելու:

Ի դեմս արարողությանը ներկա Ջորջ Քյուրքչյանի՝ Վեհափառ Հայրապետը իր օրհնությունը փվեց բարերարներին և իր գնահատանքը հայտնեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանին ու թեմի հոգևոր դասին: